ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Կիրակի, ապրիլի 5-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում նշվեց Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երրորդ տարեդարձը:

Հընթացս Սբ. Պատարագի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երեք տարիների գործունեությանն անդրադարձավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոզապալյանը:

Ապա՝ Մայր Տաճարի Սբ. Խորանին Հայաստանի թեմական առաջնորդների և եպիսկոպոսաց դասի մասնակցությամբ կատարվեց հայրապետական գոհաբանական աղոթք:

Պատարագին ներկա էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Ճարտարապետական հանձնաժողովի անդամներ, Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչներ, որոնք Հայաստան են ժամանել մասնակցելու Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահի երդման արարողությանը:

Հավարտ Սբ. Պատարագի Վեհարանում տեղի ունեցավ ճաշկերույթ: Ամենայն Հայոց Կաթողիկոսին բարեմաղթանքի ու գնահատանքի խոսք ուղղեցին Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արք. Սանթուրյանը, Տ. Ներսես արք. Պոզապալյանը, Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը, Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գևորգ արք. Սերայդարյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, Շիրակի թեմի Առաջնորդական փոխանորդ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զուլջյանը, Կիլիկիո Աթոռի ներկայացուցիչներ Տ. Սուրեն արք. Գաթարոյանը և Ոսկեբերան Արզումանյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ հայր Ֆիլիպը և այլ հրավիրյալներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ